ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր

29/01/2020

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էր՝ Արման Հակոբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 02 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 02 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին:

2. <<Բայազետ>> ազատամարտիկների միություն>> հասարակական կազմակերպությանը դրամական աջակցություն տրամադրելու մասին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 08/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հետևյալ ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ համաձայն հավելվածների՝

1) Ծաղկաձոր համայնքի Վեցիկ ճարտարապետ փողոցի և մայթի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման և ճանապարհի հարակից հենապատի վերանորոգման աշխատանքներ,

2) Ծաղկաձոր համայնքի փողոցային լուսավորության համակարգի վերատեղափոխման և ավտոմատ պահուստային գծի տեղադրման աշխատանքներ,

3) Խաչատուր Կեչառեցի և Օրբելի եղբայրներ փողոցների մայթերի և հենապատերի կապիտալ վերանորոգում,

4) Օրբելի եղբայրների հրապարակի և հրապարակի շատրվանի կապիտալ վերանորոգում,

5) Նոր թաղամասի ճանապարհի կառուցում, ասֆալտապատում,

6)Գերեզմանների տարածքի ճանապարհների ասֆալտապատում, ավտոկայանատեղի կառուցում,

7) Քաղաքային զբոսայգու՝ Օլիմպիական փողոցից ավտոկայանատեղի և դեպի այգի տանող ճանապարհի կառուցում,

8) Չարենցի փողոցի ասֆալտապատում,

9) Ծաղկունյաց հրապարակի հիմնանորոգում և հարակից փողոցների հենապատերի կառուցում,

10) Գրիգոր Մագիստրոսի փողոց թիվ 13 և Խ.Կեչառեցու փողոց թիվ 8 հասցեներում գտնվող բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ արդիականացում:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 09/

Լսեցին

<<ԲԱՅԱԶԵՏ>> ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019

թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 93-Ն որոշումը և <<Բայազետ>> ազատամարտիկների միություն>> հասարակական կազմակերպության նախագահի գրությունը՝

1. <<Բայազետ>> ազատամարտիկների միություն>> հասարակական կազմակերպությանը տրամադրել դրամական աջակցություն՝ 50 000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ զոհված կամ ծայրահեղ ծանր անապահով վիճակում գտնվող ազատամարտիկների ընտանիքներին աջակցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գևորգ Բաղալյանը